



Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն



ԱԳՎԱԹԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊՈՏՄԵԿԱՆ -

ՎԵՆԱՍՏՐՈՒԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԱՄՈՒԹԵՐԹ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒՆ

ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՆԵԱՅ ԲՈՎ

Աղարակեղաւն-Փառատոս Բիւզանդացի-Լատինագիտոց զպրոց և ուկեղարեսն նայեռնիկ զպատկիրք.

Նախորդ յօդուածով՝ շանալով ապացուցանել որ Վազար Փարպեցույ առ Վահան Մամիկոնեան գրած Չատագովական նամակը և Ս. Երանոսի «Յոյցը առաքելական քարոզութեանն» գիրքը լատիներէն լեզուէ թարգմանութեան հետքեր կը պարունակեն, ըսինք որ այս երկու գրութիւնք բացառիկ երևոյթ մը չեն մեր ոսկեդարեան մատենագրութեան մէջ, և թէ ասոնց կարգէն կրնան շարուիլ զիս զանազան գործեր, և մանաւանդ Ազաթանգեղոսը, Յետոյ մի առ մի շարելով այդ երկու գրութեանց մէջ նշմարուած լատիներէնի թարգմանութեան սխալները, կը խնդրէինք

մեր բանասէրներէ որ չմեղադրեն Եր. թարգմանչաց լատիներէն լեզուի մէջ ունեցած նուազ հմտութիւնը, և կը խոստանայինք Ազաթանգեղոսի առեղծուածային յառաջարանը վերլուծել ամբողջապէս՝ ցուցնելու համար որ մեր նախնեաց այնքան հոշակուած ու զովարանուած յունագիտութիւնն ալ շատ փայլուն երևոյթ չունի այսօր, նոյն իսկ եթէ չուզենք ըսել որ լատինագիտութիւնն ալ նուազ է ոմանց ըով: Սակայն շատ աւելի կարեւոր և հետաքննական համարուելով մեր նախնեաց բնագիտներու քննութեան մէջ մինչև այսօր այս անտեսուած լեզուն յայտնի ցուցնել, կը շեղինք սակաւ մի մեր խոստումէն և համառօտիւ ակնարկ մը տալով Ազաթանգեղոսի յառաջարանին վրայ, կ'անցնինք բուն գիրքը լեզուաքննական տեսակէտով ուսումնասիրելու, անոր հետ զուգելով նաև իւր ժամանակակից և բաղդակից փառատոսը. զոյգ սիւններ հայ կրօնական և բաղաքական կենաց տաճարի, որոնց կոթնած ամբարձած են հինգերորդ դարէն սկսեալ բոլոր մեր հարց և մատենագրաց երկերը, և որոնց ստուերին տակ և որոնց շուրջը բարդուած են մինչև այսօր անհամար քննական ուսումնասիրութիւններ պատմա-

1. Բազմավէպ 1909 թ. 2. Փետր. էջ 59: Էջերու յետասկիւթիւնը կատարուած են Հետեալ ապագրութեանց համեմատ. Աղարակեղաւն 1862, Փառատոս Բիւզանց 1832, որովհետև այս ապագրութեանց համեմայն եղած են նաև մեզմէ նախորդ զանազան քննութիւններ:

կան, մատենագրական, եկեղեցական և հնագիտական ու աշխարհագրական խնդիրներ յուզելով և խուզելով: Չկայ նշանաւոր հայախօս կամ հայագետ բանասէր մը որ ուսումնասիրած չըլլայ այս շորորդ գարու երկու վեհ մատենագիրները, կամ գէթ անոնց մին միայն և նոր կարծիք մը արտայայտած չըլլայ: Ասոնք եղած են մինչև հիմայ մեր ազգային բանասիրութեան փորձաքարերը որոնց շփուած են մի առ մի Սղիղիինկ, Լակարդ, Լանկուա, Կութշմիտ, Բիսէլ, Նահապետեան, Սարգիսեան (Հ. Բ.), Տաշեան, Նորայր, Էմին, Մալխասեան, Դաղարշեան, Խալաթեան, Կելծեր, Ֆէդդէր, Մարքուարդ, և այլն և այլն:

Ճշմարիտ բանակ մը հմուտ բանասէրներու, որոնցմէ վերջ պատկառանք և ղող մը կը զգայ երբ այս մատենագրաց վրայ խօսիլ ուզէ մէկն. բարբաղդաբար դեռ ամէն ըսելիք ըսուած չեն, և քննութիւնը սպառած չեն զանազան տեսակէտներով: Մինչև այսօր յեղիղուած և շրջըրջուած խնդիրները հետեւեալներն են գլխաւորապէս.

1. Եղած է Ազգաթանգեղոս մը քարտուղար Տրդատայ՝ հոռովմայեցի.
2. Ազգաթանգեղոս յատուկ անձի մը անուն չէ, այլ վերադիր մը Հայոց դարձի պատմութեան.
3. Մեր ձեռքն ունեցած գիրքը գրուած է ըստ ոմանց՝ հայերէն, ըստ բազմաց՝ յունարէն, և գէթ մասամբ մը միայն՝ ասորերէն.
4. Ըստ ոմանց գրուած է, և ըստ բազմաց՝ խմբագրուած, հինգերորդ դարու մէջ.
5. Խմբագրութեան համար ծառայած են պատմական ու դիւանական գրութիւն մը Տրդատայ քարտուղարի, Լուսաւորչայ վարք մը, իր անուամբ վարդապետութիւն մը, Հոբիսիմեանց վկայարանութիւն մը, և ասոնց ամենուն վրայ թարգմանող — խմբագրողն աւելցուած զանազան հասուածներ.

6. Գրեթէ նոյն ինդիրներն են նաև ֆաւստոսի նկատմամբ, և յետոյ քննելով Ազգաթանգեղոսի, Փաւստոսի և Կորեանն մէջ եղած յարաբերութիւնը, ելած են հետեւեալները.

7. Ամբողջ հասած են այս գիրքեր մեր ձեռքը, թէ պակասաւոր.

8. Մ՛վ է բանաբազն և որմէ: Կը թողունք յիշել ներքին պարունակութեան նկատմամբ յարուցուած խնդիրները, որոնց մասին խօսիլ այս յոդուածիս ալ զիտումէն դուրս է:

Մեր գլխաւոր և միակ դիտումն է ցուցնել որ Ազգաթանգեղոս գրուած է լատիներէն, նոյնպէս նաև ֆաւստոսի պատմութիւնը. այս հիմը հաստատուելէ վերջ արդէն ինքնին կը լուսարանուին, որ

1. Ազգաթանգեղոս իրական անձ մ'է, քարտուղար Տրդատայ և հոռովմայեցի, հեղինակ իր անուամբ հասած այս գրոց ամբողջութեան.
2. Այս գիրքը չէ խմբագրութիւն մը զանազան գործերու, այլ մի միակ գործ, որու մէջ ազուցուած է Հոբիսիմեանց նահատակութեան յունարէն վկայարանութիւն մը:

Յիշուանք որ բանասէրք պիտի չուզեն ծայրայեղութեամբ չափազանցել մեր այս վերջին տեսութիւնը, որովհետև մենք ալ գիտենք որ այս ամբողջական միակ գրութեան մէջ ալ ներմուծուած և աւելցուած և յապաւուած ու զեղչուած են թարգմանողի և օրինակողաց կողմանէ զանազան իմաստներ, եղածներու կրկնութիւններ, մեկնութիւններ, և նաև ամբողջ պարբերութիւններ, ինչպէս ներմուծուած են ուրիշ շատ հեղինակաց և գրուածոց մէջ, ոչ միայն մեր՝ այլ նաև օտար ազգաց և ժամանակաւ շատ աւելի մեզի մերձաւոր: Այս յուսանք կը զօրէ ֆաւստոսի համար ալ:

3. Գէորգ ասորոյ, Ս. Նիկեփորի յիշատակութիւնք, ինչպէս բոլոր յունարէն առ մեզ հասած թարգմանութիւնք և Լուսաւորչայ վարուց լատիներէն հատակոտորք, թարգմանու-

թիւնք են կամ թարգմանարար յիշատակութիւնք և քաղուածք լատին Ազգաթանգեղոսի սկզբնագրին¹ :

Իխտել կու տանք միայն որ աշխարհագրական և պատմական յատուկ անունանց այլայլութիւնք յատուց եկած են շատ հաւանականարար նոյն ինքն Ազգաթանգեղոսէ, որ զանոնք դրած է իւր գիրքին մէջ ըստ հայերէն արտաբերութեանց : Հոս անցողակի զիտել կու տանք նաև որ այս ինդրոյս մէջ չկրնար համեմատութեան եզր առնուիլ կորեան անունը հասած վարք Մաշտոցիւն, և կարելի չէ անոր ժանդակչու հեղինակութիւն մը տայ, որովհետև թէ համատուտ և թէ ընդարձակ ձևին մէջ, այդ վարքը մուրացածոյ քաղուածք մ'է, թերատ և կորեան անարժան² :

Յետ այս կէտերը զիտելու, անցնինք այժմ համառօտիւ քննելու Ազգաթանգեղոսի առեղծուածային յատաշարանը, ինչպէս որ խոստացանք :

Ար և է մատենագրի պարտքն է անշուշտ իւր գրուածին պարզանքերը համատուտի յայտնել և յատաշարանութեամբ մը ամբողջութեան բովանդակութիւնը ծանուցանել : Նոյնը անշուշտ ըրած է նաև Ազգաթանգեղոս, սակայն այնպիսի տարբրինակ երևոյթի տակ կը ներկայանայ մեզ այսօր այդ յատաշարանը, որ Հ. Բ. Վ. Սարգիսեան հասպտատում հասցիսեան անունանելով³ մրկիտուսի ծովի մը կը նմանցնէ,

ուր կը վիտան սոսկավիթիար կէտեր և խեցեմորթ ժամակներ հակասութեանց իմաստից և պէսպէս զիպաց : Իսկ Հ. Բ. Վ. Տաշեան համատուտ կը կորէ վճռելով, որ «Ազգաթանգեղոսյ գրոց յատաշարանն անշուշտ նախնականին մէջ շատ այլազգ ըլլալու էր» :

Ինչպէս յատուց եկած է այս այլալութիւնը, դիւրին է ըմբռնել եթէ զիտենք որ այժմեան յատաշարանը մասն չկազմեր Ազգաթանգեղոսի գրոց և անոր հետ ունի լոկ փոքրիկ պատահական յարաբերութիւն մը, և ոչինչ աւելի. որովհետև ինքն յինքեան առանձին գրութիւն մ'է և շատ հաւանականաբար մասն Ազգաթանգեղոսի մէջ ազուցուած Հոփսիսեանց նահատակութեան յունարէն պատմութեան Արդէն այլևայլ հետքեր, ինչպէս պիտի տեսնենք, յայտնի կը ցուցնեն անոր սկզբնագիր յունարէնը : Հեղինակը, որ չորրորդ դարու անձ մ'է անշուշտ, (կամ գէթ գրոց գիտին ժամանակակից) թարգմանաբար առած է լատին Ազգաթանգեղոսէն միայն փոքրիկ յատաշարանը, որ մինչև ցայժմ նոյնպէս կը պահուի դեռ, և կը գրուէ մեր 1862-ի տպագրութեան 19—22 էջերը : Յետոյ հինգերորդ դարու հայ թարգմանիչը, Ազգաթանգեղոսի լատին գրքին հետ իւր առջև ունենալով նաև այս յունարէն գրութիւնը, թարգմանած է հաւասարապէս, յատաշարանը պահելով իբրև յատաշարան, իսկ Հոփսիսեանց նահատակու-

1. Իթէ նոյն ժամանակ կը կարգէ Ս. Նիկիփորի յիշատակած հատուածին հետ, ինչպէս հաւանական կը համարի մեծ. Հ. Բ. Վ. Սարգիսեան (Ազգ. Եւ իւր Բազմադարեան գաղութիքը, 1890. էջ 332). Իսկ եթէ շատնազան ազրիթերէք ծագում ունին, լինք զիտարի այս յունարէն թարգմանութիւնները հայերէնի փայլէ կատարուած ընդունիլ, ինչպէս ընդունուած է ցարկ :

2. Համատուտ խմբագրութիւնք՝ արդէ իսկ բանասերներէ արհամարհուած է և Տ. Նորայր զայն արժանազան Սաւո-կորիսե կ'անուանէ : Իսկ ընդարձակը լինք զիտեր ինքն՝ այնքան յարկ կը համարուի, քանի որ նոյն ինքն Տ. Նորայր՝ որ անոր վրայ հետզհետէ է փոխելով որ «մինչդեռ Հինգերորդ դարու յեանազայն պատմիչը Ազգար «Փարպեցի և Մովսէս Խորենացի» ազիզօրմ արտա «ուչ բանիւք կ'աւագնե գրարժու Տաշոց թագաւորութեան և գրելումն մեծին Սահակայ, կորիւն՝ ակա «նստեա վկայ ժամանակն ըլլոր թաշտաութեանց՝ հմար « և լեզուակազ կը Յնայ. ոչ մի բան եւ ոչ քիս բանի,

« եւ ոչ որոց յիշտակ իճև (Փ. Բիւզանդ. Գ. Ժգ) կը « նուրէ հայրնի երկրին անշուր աղտեց, կը արթային « զատապարտութեան, մասնանոց մեծանուն կաթուղի « կուրի հալածման, որ թերևս աւելի քան զՄաշտոց հոգ « և ինձմ տարած էր իւր զատախարակութեան », կը ստիզարի յաւելուլ. «Այս անկեսայ մանր ծարր թերութիւնք կը պարտաւորեն զիս բնի՝ թէ վարքը Մաշտոցի իբրև պատմական գրուած լուրի մեծ արժէ, ճառ մի է այն և ոչ պատմութիւն» : (Կորիւն Վ. և նորին թարգմանութիւնք. 1900 էջ 9—10) : Եւ սակայն հեղինակը իւր ընդարձակ յատաշարանին մէջ կը խոստանար պատմութիւն գրել և ոչ ճառ մը : Այսին համարմակութեամբ կը կրկնենք մեր փրագոյն յայտնած կարծիքը, և շատ ուղիղ անդադարմութիւն կը համարենք մեծ. Հ. Գ. Վ. Հաւակայեանեի տեսութիւնը թէ, «Կորիւն յարցաբանու համար՝ հարկ է զայն անցնել քննադատութեան առեղծ սանրոցի մը տակին» : (Ուղագրութիւնք թաշտաութեան 1907, էջ 146) :

թիան մասը ազուցանելով բուն իր տեղը՝ պատմութեան մարմնոյն համաձայնը կը ցախինք որ այսու մեր մատենագրութեան ամենաթանկագին հատոր մը կորսուած է. որովհետեւ հեղինակը՝ որ Ազաթանգեղոսի հետ ապրած է՝ զոհացած չէ միայն Հոփո-սիմեանց վկայարանութեամբ, այլ գրած է այդ ժամանակի դիպաց ընդարձակ պատմութիւնը, ինչպէս իրաւամբ կը գուշակենք իր յատաջարանի խօսքերէն (էջ 22-26):

Այս գլխաւոր կէտէն դուրս, հնագրական ակնարկ մը տալով ազաթանգեղեան պէմուն յատաջարանին, մեր առջև կը պարզուի շատ հետաքննական երևոյթ մը, որ մեր մատենագրութեան մէջ զեռ առաջինն է: Ճիշդ նման երևոյթ մ'ալ ժամանակաւ անդրադարձուցինք Հոովմէական հոչակաւոր Martirologio Geronimiano-յի մասին: Այս վկայարանութիւնը հաւաքողը, ինչպէս նաև մեր Ազաթանգեղոսի յատաջարանին թարգմանողը, չեն կրցած իրենց աշխատութիւնը լրացնել և կատարակ օրինակ մը թողուլ յետնոց. իրենցմէ մնացած է միայն գրեթէ անկատար ստաւադձ մը, լի սրբագրութիւններով, որով անհմուտ օրինակողներ առանց սխալներն ու եղած սրբագրութիւններն իրարմէ զանազանելու, անխտիր օրինակած են մին կամ միւսը և երբեմն նաև երկուքն ի միասին: Այսու յատաջ կկած են այնքան կրկնութիւնք բառերու, հոմանիշք և այլն, որոնք այսօր իրրև լեզուի ճոխութիւն կը նկատուին, մինչդեռ անխիղճ պէտք էին սրբագրուիլ ու ջնջուիլ: Այսպէս, օրինակի համար, ունինք.

յէջ 8 շտան զապրոշտ անձանց փրկոշրիան, ուղղելի՛ կամ շտան զուպրոշտ անձանց, և կամ շտան անձանց փրկոշրիան.

անդ. այլ առ չըոշրեան աշրատոշրիան կարօտոշրիան յետիև տնանգոշրեան՝ որոնցմէ պիտի առնուի ընորանօք մին միայն. նոյնպէս

անդ. շտապեալք (ուղ. ստիպեալք?) առ վտանգի անկեալք տարակրտանաց զնարկն համերոյ, ուղղելի շտապեալք առ վտանգի և կամ ի վտանգ անկեալք տարակրտանաց. և այլն: Եոշրեալէս դարձեալ

յէջ 13 ի խեղիկ եղեալ և խոչիւքն ի մէջ քերեալ զկարգ պատմութեան՝ իրրև կարգս պատմութեան քերեալ շատ օրինիև շատ ժամանակի իրացև եղիոց. ուր վերջին իրրև կարգս պատմութեան քերեալ բառերը նախորդներուն կրկնութիւնն են օրինակողի սխալելով: Գարձեալ

յէջ 21 ի ման հտուեալ մտեալ և կտօքև Ատտոճոյ այսրեև զարձեալ, անխշապէս նորէն կը կրկնուի, առ մտեալ ի զրոնս մտնո, զարձեալ անտի կտօքև Ատտոճոյ:

Թողլով այսպիսի ուրիշ շատ կրկնութիւններ ու սխալ ընթերցումներ, որոնց կարգին կրնայ դատուիլ նաև յէջ 10 գրտնուած ձևարարութիւնը՝ բառը փոխանակ ձևարարութիւնը ըլլալու, առնունք սխալներու երկու մեծ զլուխ-գործոցները (յէջ 20 և 21) որոնք անհերքելի կերպով մը կը թուին հաստատել մեր այս աեաութիւնքը թէ սկզբնագիր յունարէնի մը նկատմամբ, և թէ առաջին թարգմանութեան անկատար մնացած ըլլալուն նկատմամբ: Այս հոչակաւոր զլուխ-գործոցներն՝ են հակեհատու պատակաւ բառը և մենակիւ մենամարտիկ երկպատակաւ տանքիան՝ աեղծուածը:

Հանկուտուպատակաւ բառն արդէն շատ քննութեանց առարկայ եղած է և զանա-

1. Bessarione, Serie III. vol. I. fasc. 91-92 էջ 146.
2. Հաւանականաբար այս երկու կտերք կրնան ուղղուիլ նաև այսպէս. այլ առ չըոշրեան (կամ չըոշրեան, աշրատութեան, կարօտութեան) ի յետիև տնանգոշրիան անկեալք. շտապեալք առ վտանգի տարակրտանաց զնարկն համերոյ... (բազումք) ի վճանախանութեան արտահատուտապատակաւ անկեալք յօտարի:

3. Այս անանարեք պիտի կարգացուի քանութիւն, ինչպէս յունարէնով պիտի ուղղուի թէ վերջ և ինչպէս ուղիւ կարգացած է արդէն Մարտոյի վարձին ճաւաքօք (այ. 1883 էջ 28). - Միայն այս օրինակը թող բաւական համարուի ցուցնելու համար որ Մշտողի վարուց հաւաքողը Ազաթանգեղոսն քաղած է սխալ մը, որ միանգամայն կը ցուցնէ թէ այս երկու գիրքերը խմբորդ կամ յօրինողք չեն կրնար միևնոյն անձն ալ ըլլալ:

զան նուազ կամ աւելի հաւանական մեկ-
նութիւններ և ուղղութիւններ ստացած:

Մեծ. Հ. Գ. Վ. Նրահայտեան իւր
վերոյիշեալ Ուղղագրութեանց զիրքին՝ մէջ
յետ յիշելու որ «Հ. Յ. Թորոսեան, 1897-
ին, Բազմապէսի Մոտրանդակի պատաս-
խաններու մէջ ստաջարիկն «նոնգիտան
պատասխան», «նսնգիտան տարան» և
մանաւանդ «նս դիտարատտ անկտ» ըն-
թերցմամբ ուղղագրել վերոյիշեալ բառը»,
կը յաւելու. «կարծեմ լաւագոյն է ուղղել.
«գիարդ նեղեղու տապաստ անկտ»: Ըն-
թացք պատմութեանն կը ցուցնէ որ ա-
զաւազեալ բառը ուրիշ կերպ չէ կարելի
լինել»: Մինչդեռ մենք կը յուսանք որ
կարելի է այլազգ երկնել, և լուծման բա-
նային կու տայ երկպատակութեան բառը . որ
է ըսել, այդ բառը պէտք է մնայ ճիշտ
նոնգիտարատտական. որովհետև սխալը ոչ
թէ մեր ընթերցման մէջ է, այլ առաջին
թարգմանողի՝ յունարէն չգիտնալուն մէջ,
և առաջին օրինակողին՝ սխալը ուղղիչն
զանազանել չկրնալուն մէջ: Բայցարեւնք.
Թէ հսկղետապատական և թէ երկպատա-
կան բառերու մէջ ունինք հսկղիտ և երկ
(երկու) հայերէն երկու բառեր, կոնակնին
պատական յաւելուած մը շարկած. արդ այս
երկու գիրքի մէջ ալ այդ պատական յա-
ւելուածը յառաջ կ'եկած է թարգմանչին
յունարէն παθ... (= πασχα...) արմատը
չհակնալէն, որով ճիշտ յունարէնը ան-
ցուցած է իւր աշխատութեան մէջ, ուր
նոնգիտարատտական բառի մէջ մնացած է
ցայտօր առանց ուղղութեւ, իսկ երկպատա-
կանի մէջ յետոյ նոյն ինքն թարգմանչին
ուղղութեւ է յաջորդ բանարիւն բառով,
թէպէտ և օրինակողը (բարեբարդբար)
զանազանութեւն չէ դրած սխալի և սքը-
բազրուածի մէջ և երկուքն ալ անխտիր
բովէ բով շարեր է: Արեւմտայն երկպա-
տականը ոչ թէ երկպատակի կամ կրկնակի

պիտի հասկցուի, այլ բանարիւն, նեղու-
րիւն, որովհետև թարգմանողը ի սկզբան
յունարէն δὴ ἰσχυρὰ բառը՝ որ կը նշա-
նակէ վիշտ, բանարիւն, նեղարիւն, չհաս-
կնալով, անոր առաջին մասը առած է իբր
δὸς = երկու և երկրորդ մասն ալ չհաս-
կնալով յունարքը դրած է պատական,
մինչև որ յետոյ անդրադառնալով ուղղած
է իր սխալը և սքրագրած՝ բանարիւն բա-
ռով: Թարգմանողը իւր այս սխալը քայլին
առաջնորդուեր է նախորդ գայթնմէ մը.
տեսեր է յուն. εὐαγγέλιος բառ մը և իս-
կոյն առանց շատ մտածելու դրեր է մե-
նակիս, մեկամարտիկ բառերը, փոխանակ
դնելու սատտիկ՝ ինչպէս որ հաստարա-
պէս, և մանաւանդ աւելի ճշդիւ՝ կը նշա-
նակէ այդ, և մեզի ընծայեր է մեկակիս
մեկամարտիկ երկպատական բանարիւն՝ հոն,
ուր քիչ մը աւելի յունարէնի տեղեակ
թարգմանիչ մը պիտի բէքը, սատտիկ բանա-
րիւն՝ պարզ և մաքուր: Ճիշդ այս ոճով
յառաջ եկած է նաև նոնգիտարատտակա-
նը, փոխանակ՝ գիարդ վսխան կրկնաց ը-
սելու, յունարէն παθ... (= հսկղիտ,
վսխան, դարար և πασχα (αοτ. πάθω,
παθών) = կրկ բառերու սխալ թարգմա-
նութեամբ: ի բացայայտութեւն մեր ըսա-
ծին օրինակենք այս երկու իմաստները.
(յէջ 20) «վսան մանուսն քաջին խոս-
րովու թէ ուստի և կամ գիարդ խոսկե-
տապատական (ուղղելի վսխան կրկնաց),
և կամ որպէս և կամ զինչ անցք անցին»,
և այլն. (յէջ 21) «որպէս զթացեալ Ոս-
տուծոյ այց արար Հայոց աշխարհիս, ի
ձեռն առն միով... որ բազում համբիրու-
թեամբ ազգի ազգի փորձութեանց և կա-
պանաւոր վշտաց մնակալիս մնամարտիկ
երկպատական ըրնակեան (ուղղելի սա-
տիկ ըրնակեան) յիկտաշատ քաղաքի,
վսան Քրիստոսի յաղթութեամբ տարեալ»
և այլն:

քանի որ միշտ մէջ սխալը սքրագրուած է թարգման-
չին կողմանէ և միայն օրինակողը չէ կրցած լաւ ան-
դրադատուալ, մինչդեռ միակն մէջ ինքնին խթարողը
սխալը այդպէս գտած և այդպէս ալ օրինակած է: Մի-
տայն վարքին մէջ չեն պակսիր դեռ այգիի սխալներ:

(յորս նշանաւոր է նաև յանարիւն դիմասկիւնը-ը յէջ 17
տող 2) զորս լինք կրնար եր. կորեան համբաւոյն հեռ
հարցանել:

1. Ուղղագրութեանց սղայլին մտածնալուց. էջ 32-33.

Յունարէն թարգմանութեան սխալներ ղեռ շատ կան Ազգաթանգեղեան այս յառաջարանք մէջ ուր թարգմանչին մոգական գաւազանին ներքե յն. ՕΛΥΓΟΥΡΙΣ = Խժժժժժժժժ ինչ արգանք. (Հմտ. «Է զարգաստ մեծացուցանեն փոքր ինչ արգանք» . յէջ 9) և շատ աւելի մեծ ճարտարութեամբ յաջող էջին (էջ 10 վերջընթեր տող) «համատարած ծովուն» յորժանուտ Բաղկաւակ ալիքը յանկարծ ծաղկաւծել կը գունագեղին, յունարէն անդրոս = ծովակաւտ, ծովակաւ և անդրոս = հակասակ իրարու հետ շփոթուելով: Բայց մեր նպատակը չէ հոս ամբողջ այս յառաջարանք սրբագրել, դիտումնիս էր միայն ցուցնել որ Ազգաթանգեղոսի պատմութեան մասը չէ, որովհետև այդ գրուած է լատիներէն՝ ինչպէս քիչ վերջ պիտի տեսնենք, մինչդեռ այս գրուած է յունարէն, ինչպէս այս օրինակները կը յուսանք հաւատեցին. միայն ի հաճոյս այս յառաջարանք սրբագրել ուզող բանասիրաց պնենք յետին օրինակ մըն ալ 12 էջէն քաղելով. «Սոյն օրինակ և մեր, ոչ յանդգնութեամբ բարբառովք ինչ ի ներքս անկան նկ անտարար հոսեցայ» . ուր նախ անտարարը իբրև սխալ ընթերցումն օրինակողաց պիտի սրբագրուի աստարար, և յետոյ ի ներքս անկանել ու այդ սրբագրուած աստարար հոսեցայ-ն պիտի ուղղուին ներկայացայ խօսել յն. ԷΙΣΨΕΥΧΑ (= ԷΙΣΨΕΡΑ) և ԲΕΩ-ΨΥΧΟΜΑΙ ի փոխարէն ԲΕΩ-ΨΥΧΩ բառերու համաձայն, տալով հայերէն ուղղագոյն և բացայայտ իմաստ մը, «ոչ յանդգնութեամբ... ինչ Բաղկաւակեցայ խօսել (կամ պատմել), այլ... ի բռնութեան հրամանաց» և այլն-ինչպէս հոս աստարար հոսել գրուած է խօսել, պատմել-ու փոխարէն, այսպէս ալ յէջ 19 նոյն իմաստով գրուած ունինք ընթանայ բառը. «ոչ զիւր քաջութիւնն սուտ ինչ հրամայեաց մեզ վրպասանել, և ոչ զբազարող բանից ինչ աստպելս աւելի քան զարժանն ընթանալ» (= պատմել) և այլն: Արդ այս բառը կը համարինք իբրև նեցուկ աւնու մեր վերագոյն յայտնած ու-

րիչ մէկ տեսութեան, թէ լատին Ազգաթանգեղոսի փոքրիկ յառաջարանք պահուած է այս յունածե յառաջարանին մէջ: Հայ ընթանայ = պատմել բառը անտարակոյս հետեանք է յունարէն ԾՕՎՁ = վագել, վանել և պատմել բայի. սակայն՝ որովհետև այս բառս ալ սոյն պատմել իմաստով նոյն իսկ յունարէնի մէջ դուն ուրեք գործածուած է, գուշակել կու տայ մեզի որ հոս այս իմաստով գտնուելը հետեանք մ'ըլլայ լատիներէն բնագրի percurro բայի որ հաւասարապէս և նոյն յաճախութեամբ կը գործածուի նշանակելով վագել և պատմել:

Այսչափ յառաջարանի նկատմամբ, անցնինք այժմ բուն Ազգաթանգեղոյ պատմութեան. սակայն ղեռ լատիներէնի չանցած, բառ մըն ալ ըսենք Հոփսիսմանց վկայարանութեան մասին որ ազուցուած է բաւական ճարտարութեամբ Ազգաթանգեղոսի գրքին մէջ:

Այս վկայարանութեան Ազգաթանգեղոսի պատմութեան անկախ և յունարէն լեզուով գրութիւն մ'ըլլալը, շատոնց արդէն ապացուցած են բանասէրք, ի զուր է ուրեմն կրկին յեղեղել նոյն բաները, պարզապէս ապացոյցներու շարքին մէջ աւելցնելու համար քանի մը բառեր ալ, որ անոնք չեն յիշած: Մէկ բառ մի այն պիտի քաղենք մենք և այն ալ պարզապէս ցուցնելու համար որ այս վկայարանութիւնը չվերջանար յէջ 163 փթ պարբերութեան վերջանալով, ինչպէս կը համարուիցայ սուր. ալ ղեռ քիչ մըն ալ յառաջ կ'երթայ և յէջ 166 կու տայ մեզի ինգլիկեաց սխալ թարգմանութիւն մը, փոխանակ հրամայեաց-ի: Հոս (էջ 166) յիտ առաջին անգամ առ թոսարովիդուխտ եղած տեսիլը պատմելու, հեղինակը կ'անցնի պատմել երկրորդ տեսիլ մը և կ'ըսէ. «կրկնեաց դարձեալ ևս կ'ընջն զնոյն տեսիլն, և Երկուկնեաց սպասնալեօք, զի եթէ ոչ պատմեացէ... մեծամեծ տանջանս ընկալցի» և այլն: Արդ այս յանկարծակիս հիգլիկեաց-ը թարգմանչի սխալ մ'է որ չէ անդարդարձած թէ Երկու բայը որ յրկու, պատուիրել կը

նշանակէ չունի յարարութիւն πέντε—յէ
ձագած πέμπτας, πέμπτος բառերու հետ:

Սակայն պէտք չենք մեղադրել եր.
Թարգմանիչը եթէ յունարէնի շատ հմուտ
չէ, իր մասնահիշողն է լատիներէն լեզուն
որուն շատ աւելի տեղեակ է. և եթէ այժմ
պիտի անդրադարձնենք մի քանի սխալ-
ներ ցուցնելու համար որ Ագաթանգեղոս
հոովմայեցի քարտուղարը լատիներէն լե-
զուով գրած է իւր պատմութիւնը, կը
կանխենք միանգամայն յայտնելու որ այդ
սխալները համեմատաբար երկրորդական
են և պատահական փոքրիկ անուշադրու-
թեան հետեանք, մինչդեռ ամբողջ գիրքը
կը թարգմանէ վարժ գրչով և ոսկի հայե-
րէնով:

Այժմեան հայերէն Ագաթանգեղոսի մէջ
հին լատիներէն բնագրի հետքերը իսկոյն
առաջին էջերէն իսկ կը սկսին նշմարուիլ.
Նախ կ'ունենանք (յէջ 31) վրձ խնդրել
զանկանէն իարեանց ի տերտրեկէկ լատի-
նածև խնդրատութիւն մը, յետոյ (յէջ 34)
նշանակապ պալարակապ մետաքոխք նկա-
րագիր մը՝ որ կը յիշեցնէ մեզ զուտ հոով-
մէական bulla-ները. յէջ 36 կամ մը
փոխանակ ոչ ըլլալու, լատին haud = ոչ
և aut = կամ իրարու հետ շփոթելով. ու-
րովհետև պարսից թագաւորը կը խոստա-
նայ՝ իշխանաց և մեծամեծաց համար՝
յիբրդարական ցահ իտոյ տերտրեանև մա-
տոցանկի... (և կ'ըսէ) յայց միայն արու-
տոյս եւ ի վեր եդեց քու զեւ. (իսկ) և
բէ կորի յանորցաց ար իցէ կամ ի պատուա-
կանաց (ուզղելի՛ և յու պատուականաց),
ազգի ազգի պատիս և պարգևս և վարձուց
նատոցմունս շնորնոյ. հակադրութիւն մը՝
որ կամ—ով կը կորսուի և ոչ—ով կը գոյա-
նայ: Բայց ամենէն աւելի լատիներէնի
զօրաւոր նշմար մը կը գտնենք յէջ 40,
ուր պատմելով Անակայ և իւր երբօր փա-
խուստը՝ յետ դաւաճանութեամբ սպաննե-
լու գլխորով, և հայ հաւատարմաց անոնց
հետապնդիլը, կ'ըսէ. ի կիրձս ձևապար-
հայ արգելիկ զնոսս, ի մէջ արարելով զնոսս
ի Տափերական կամրջաց զետափեժ առեկիև
զնոսս. ուր կը զրուի ի մէջ արարեալ

զնոսս բառ առ բառ թարգմանութեամբ լա-
տիներէն interfector illos—ի, փոխանակ
զրուելու սպանեալ զնոսս ինչպէս որ այդ
լատիներէնը կը նշանակէ: Յիրաւի հոս
յայտնապէս ի մէջ առնու գաղափար մըն ալ
կայ, քանի որ հայ զօրականք երկու մաս
բաժնուած կը հետապնդին դաւաճաններու,
սակայն այդ իմաստը արդէն իսկ բովան-
դակուած է ի կիրձս ձևապարհայ արգե-
լիև զնոսս խօսքին մէջ, և եթէ այդ ի-
մաստով աճուած ըլլային այս խնդրական
բառերն ալ, այն ատեն Ագաթանգեղոսի
ոսկեղէն թարգմանչին գրչին ներքև ի մէջ
առնալ մը պիտի ունենայինք և ոչ՝ արու-
րեալ: Յամենայն դէպս լատին բնագրի
միակ հետքը չէ այս, և նոյն իսկ շնոր-
հելով կորուստ մը չենք ընել:— Յէջ 47
ի ժամ վաղուի փոխանակ ի ժամ առա-
տուո՝ պատերազմի ժամադրութիւնը, ինչ-
պէս կը ցուցնեն յաջորդ տողերու ընդ
այցև ընդ սատտուն բառերը, հետեանք է
լատ. ad mane—ի. նոյնպէս լատիներէն
gerere բայի ազդեցութեամբ է որ 51 էջի
մէջ կ'ունենանք փոխանակ կենացն զոր
պարտ էր առնել քեզ, փոխանակ ունենա-
լու զոր պարտ էր վարել քեզ. որովհետև
լատ. gerere բայն միայնակ կը նշանա-
կէ ստնել, գործել, իսկ երբ է vitam ge-
rere կը նշանակէ կեանս վարել: Այսպէս
լատին. patrius բառի ազդեցութեամբ է
որ յառեժ եկած է շատ յաճախ գործա-
ծուած հայրենի, հայրենեաց բառը փոխա-
նակ հայր, հոր—ի: Կը համարինք թէ նոյն
ազդեցութեան նշան մ'ըլլայ նաև յէջ 61
գրուած մեծ է ինձ խօսքը, զոր բառ պա-
հանջելոյ իմաստին լաւ է թերևս ուզղել՝
մանաւանդ ինձ լատին. magis բառով.
Որովհետև երբ Լուսաւորիչ կը նախատէ
զկուսաշատութիւն Տրդատայ, սա կը պա-
տասխանէ. ի մեզ ես նկոնցար զեկ ի բնա-
մանս, նամայնուկեպար առել ձիս և շորիս...
և այս, առ, մեծ է ինձ (ուզղ. մանաւանդ
ինձ) որ իստեցայ ընդ քեզ, և մեծարան
եղի քեզ, և այլն:

Այսպէս ստացմէ շատ աւելի զօրաւոր
ապացոյց մը ի նպաստ լատիներէն բնա-

զրի, ունինք յէջ 74 ուր Լուսաւորիչ զե-
ղեցիկ հակադրութիւն մը կազմելով ի մէջ
կրօնից կոապաշտութեան և ֆրիստոսի
խաչելութեան, կ'ըսէ. « Էւ քանզի ուսէին
« և ըմպէին մարդիկ զարիւն զոհից անաս-
« նոց զիցապաշտութեան, վասն այսո-
« րիկ եհեղ զարիւնն իւր ի վերայ փայ-
« տին. զի փայտն ընդ զրօշնալ փայտիցն,
« և ինքն ընդ մարդազէմ պատկերացն
« պղծութեան, և արխնն իւր ընդ նուազացն
« ուրախութեան արեանցն, որով և նորո-
« զուսն մարմնոց գաւարութեան մարդ-
« կան »:

Հոս այս անակնկալ և իմաստին անյար-
մար ուրախութեան նաւաղեկրք մտածել կու
տան իսկոյն թարգմանութեան սխալ մը,
և յիրաւի մեզի ընդոտաջ կ'ելլէ լատինե-
րէն melo, —nis կամ ris? = ուխտար, այժ յոր-
մէ ունինք նաև melota կամ melote
իրև արխարեկի մարք և զգեստ, որ շատ
զիւրաւ կրնար շփոթուիլ melos = կրգ,
նուազ բառի հետ՝ յորմէ ունինք melodus,
melodia, և այլն: Ասոր զոյգ ունինք նաև
laetus = ուրախ և leto = սպունակ ար-
մասները, որոնք կրնային շատ զիւրաւ
շփոթութեան առիթ մ'ըլլալ թարգմանչին.
և արդէն բաւական էր այս զոյգ բառերէ
միոյն լաւ ուշադիր ջըլլալ երկրորդին մէջ
ալ սխալելու համար: Արդ այս երկու
բառերը իրենց ուղղագոյն ձևով առնելով՝
կու տան մեզի պայծառ իմաստ մը, արխնն
իւր ընդ սպունդից (—ոչխարաց սպունդից)
արեանցն »: Էւ այս մեր ուղղագրութիւնը
գրեթէ անփոխելի կ'ընէ եօթներորդ դա-
րէն մնացած յունարէն պատատիկ մը՝,
որ ճիշտ այստեղ (անշուշտ լատիներէն
բնագիրը լաւ ևս հասկնալով) կը զնէ
καὶ τὸ αἶμα αὐτοῦ ἀντὶ τῶν αἰματῶν τῆς
κρίσεως, և արխնն իւր փոխանակ արեանցն
սպունդից (անխարաց):

Նաև յէջ 104 երբ Տրդատայ քաջա-
գործութիւնները պատմելով և անոր հսկա-
յական հասակը նկարագրելով կ'ըսէ, վասն
զի սեզ իսկ կը առ նսնդերմ, և այլ ուսով
պեղորսեան հաստատութեամբ քուսն ոսկերօք
և յոյր մարմնով, գուշակել կու տայ փո-
քրիկ շփոթութիւն մը լատիներէն appara-
tu = պերճութեամբ, զիևոս զարդոս, հաւն-
զիւրճի և apparitu = երևութի, նկարագր
բառերու:

Յէջ 107—108 ունինք պարբերութիւն
մը ուր զրիթէ հայերէն բառերով լատի-
ներէն կը կարգանք. և այս՝ թարգմանչին
ամենէն անյաջող սուրն է. համեմատական ըու-
նով ինքն ալ վարակուած է. կ'ըսէ, վասն
որայ պատուէր ասեալ՝ անտրեկ արարեալ
բազաւորաց աշխարհին, զմարդիկ կոցոցու-
նելին՝ զի ի պաշտաման դիցն յոյսփելոյ. մինչ-
զեռ արթնութեան վայրկենի մէջ հաւանա-
կանարար պիտի ըսէք. վասն որայ պա-
տուէր տուեալ սաստիկ՝ բազաւորաց աշխար-
հին, զօրութեամբ օրինաց՝ զի պաշտօն դիցն
յառնտիւսցի: Հոս՝ ճիշտն ըսելով, պատուէր
ասեալը փոխանակ պատուէր տուեալի
թարգմանչէն աւելի օրինակողաց կրնա
ընծայուիլ, սակայն իրեն անշուշտ վերա-
պահելի են saevientes—ը անտրեկ արա-
րեալ թարգմանելը փոխանակ սաստիկ ը-
սելու, ինչպէս այդ բառը ըստ ներկայ ի-
մաստի պահանջածին կը նշանակէ. իրեն
է նոյնպէս viribus statutis—ը զօրութեամբ
օրինաց թարգմանելու տեղ՝ զմարդիկ կոցո-
ցունելին թարգմանելը:

Քանի մը էջ վերջ (112 էջ) կը սկսի յու-
նալեզու Հռիփսիմեանց Նահատակութեան
պատմութիւնը, որ դեռ 166 էջի մէջ ալ
կուտայ մեզ վերոյիշեալ իննգլիսուսաց
հրատայաց սխալը. բայց այդ վերջին
նշմարն է յունական բնագրի. յէջ 172
դարձեալ կը սկսին լատինական բնագրի

1. Հմտ. Հ. Բ. Վ. Սարգիսեան՝ Ազգայնագիտութեան
և իւր քաղաքագիտութեան գրողները. էջ 331. որ այս ըս-
տաւորը բարձրած է եօթներորդ դարու ճիշտակալ Ս. Նի-
կիթորի «Բեքոթիմ ճիշտակալ» գրքէն. — Ինչէ Արթուր-
զեղով յունարէն թարգմանութեան մնացած սյովման
գնահատան օրինակներն ու պատասխաններն ալ-

զերէ կ'ընդունի, այն ասան այս օրինակէն մզուած՝ ստի-
պուած ենք ճանչուու. որ յունարէն թարգմանութիւնը
նշ թէ այժմեան հայերէնի վրայէն կատարուած է, ալ
ուղղակի լատին բնագրի վրայէն, որով հայ թարգմա-
նչին սխալ ճանաչած բառերը, յոյն թարգմանչին ցով ու-
ղի ճանաչողները:

հետքեր որ անընդհատ մինչև Ազաթանգեղայ պատմութեան գրոց վերջը պիտի առաջնորդեն զմեզ, Ս. Լուսաւորչայ ընդարձակ վարդապետութիւնն ալ ի միասին առնով և միայն փոքրիկ բացառութիւն մ'ընելով Ղևոնդի կեսարիայ հայրապետի թրդթոյն (էջ 613—618) որ յունարէնէ թարգմանուած կը թուի շատ հաւանօրէն, և այսու այդ թրդթոյն վաւերականութեան ապացոյցն ալ կը զօրանայ. բայց մեր դիտումն է ամբողջով միայն լեզուաբնական սահմանի մէջ և շանցնիլ ընաւ ընազրաց պարունակութեան զանազան խնդիրներու:

Եւ թէ 172 ուրեմն կը կարդանք. գերիտական արարածս եական գիտաբեւանքն իւրով յսնտուղիս իմիք ի մի ճրամոն հաստատեայ՝ զաշխարսն պատրաստեաց յունչե, և այլն: Արդ Հայկազեան բառգիրքը ի բառն անտեղի յիշատակելով այս բացատրութիւնը՝ անտեղիս—ի ցով անմիջապէս կը յաւելոյ. իմս ի մէջ ունի, ուր ոչ գոյր տեղի. և այս բացատրութիւնը շատ ճիշտ է և համաձայն իմաստին. թերես թարգմանիչն ալ յանտեղիս դրած միջոց այդպէս մտածած ըլլայ և աւելի լատիններէն in spatio—յի բառական թարգմանութիւն մ'ընել ընտրած, քան թէ իր ոսկեղէն հայերէնին դէմ մեղանչել և ըսել, ինչպէս անխիղճ կ'ըսենք մենք այսօր, ի միջոցինա լատ. in = մէջ նախադրութիւնը առած է իրր in = չ, տ, ան բացասական: Սակայն նոյնպէս չենք կրնար արդարացնել 178 էջի սխալ ընթերցումը, Հոս՝ եշխարք փոխուած են մասերու. Ս. Լուսաւորիչ կը խօսի Հոփսիսմանց վրայ և կ'ըսէ. «վանս « որոյ իսկ գիւր վկայան սիրելիսն առա « քեաց առ ձեզ, որք ի վկայելն իւրեանց՝ « վկայեցին զմիասնական տէրութիւնն Եր « րորդական՝... և զմահ իւրեանց եղին « կիւր հաւատարիմ հաստատական՝ իւ « րեանց ճշմարտութեան հաւատոց, որոց « ահաւասիկ և ցառք ի միջի ձերում պատ-

մն. որք կենդանի են առ Աստուած և « բարիխօս ստուցողացն՝ որ մաղթեմք բա « րեխօս ունել զնոսա առ Աստուած: Գան « զի վանս Աստուծոյ մեռան, կարող են « զմեռելութիւնն բազմաց կենդանացուցա « նել »: Այս ցառքը, զոր ոմանք շատ բառացի առնլով ուզած են Ազաթանգեղեայ գրոց ժամանակի յետնութեան մ'ապացոյց համարել, մենք ընդհակառակն կը համարինք լատիններէն բառի մը սխալ ընթերցման հետևանք. մեզ կը թուի որ հոս լատիններէն ընագիրն ունեցած ըլլայ reliquia = մատուք, եշխարք բառը և զայն eloquia = ձառք կարդացած ըլլայ եր. թարգմանիչը. և ի հաստատութիւն մեր այս կարծեաց բաւական զօրաւոր կը համարինք յաջորդ բացատրութիւնը, որք կենդանի են առ Աստուած և բարեխօս ստուցողաց, զոր յետնագոյն օրինակողաց ընծայելու բաւական կուտան մը շունչինք, ինչպէս կրնանք ունենալ անոնց ընծայելու վերջին՝ որ մաղթելք բարեխօս ունել զնոսա առ Աստուած բառերը: Հոս՝ ուղղելու ենք նաև լատ. feruntur բայէն ծագած պատմեն բառը և անոր տեղ դնելու ենք յածին՝ ինչպէս հաւասար կերպով կը նշանակէ, և ինչպէս հոս իմաստը կը պահանջէ. որով կը համարենք որ Ս. Լուսաւորիչ փոխանակ ըսելու, որոց անաստիկ և ցառք ի միջի ձերում պատմին, ըսած ըլլայ՝ որոց անաստիկ և նշխարք ի միջի ձերում յսնտուղիս... բարեխօս ստուցողացն:

Այսպէս նաև յէջ 180 ի խոր վիրապի... յարամ բաղեակն կայի ես ի մէջ օձիցն իրրե ի շողջի՛ խօսքին մէջ, լաւագոյն էր այս վերջին ի շողջի՛ բառը փոխանակել ի գերեզմոնի բառին հետ, որովհետև լատ. tumulus հաւասարապէս կը նշանակէ շողջ և գերեզման: Նոյնպէս յէջ 185 հմուտ լատինագէտ թարգմանչէն պիտի սպասէինք որ jus բառը փոխանակ հարպատ իմաստով իրաւունք թարգմանելու, զնէր մեզի զօրոյրին, կարողութիւն փոխարեւել նշանակութեամբ այդ բառին և ինչպէս կը պահանջուի ի պայծառութիւն իմաստին. է՛ր արդեօք ընար աղլլական միոյ

1. Թերես Հոս գտնուած Երրորդական, հաստատական բառերը ուղղել և ըստ Երրորդորդեան, հաստատութեան, օրինակողաց սխալ ընթերցման հետևանք համարելով:

մտեկամարդոյ ունի) գրեմ սոն սկոյի . . .
 դիմոյ էր ինար այրմ յիևի, երկ ոչ յԱս-
 տուծոյ էր տուեալ զիրուուունս (ուղղ. զգորու-
 թիւն) յայդորեանն: Բայց այսպիսի մանր
 անճշդութեանց խտտապահանջ չըլլանք և
 անցնինք աւելի կարևոր կէտերու, յորս
 նշանաւոր է յէջ 232 զըրուած բացատրու-
 թիւն մը որով իբր թէ Աստուած հիթա-
 նոս թագաւորաց կը հնազանդի? իւր սի-
 բելեաց փրկութեան համար: Ս. Լուսաւո-
 ըիչ մի առ մի յիշատակելով հին օրինաց
 մէջ Աստուծոյ առ մարդիկ երևանս դէպ-
 քերէ, կ'ըսէ. «Էւ մայպէս (ուղղ. այնպէս)
 « ընդելական և մերձաւորագոյն յաճարէ
 « զերևեն, միևլև ձերևոտաց բազաւորացն
 « ինսզանդի տեսիւմըն՝ առ ի պահպա-
 « նութիւն իւրոց ծանօթիցն». և կը յա-
 լելու. «զորոց և (Մովսէս) պատմէր իսկ,
 թէ կշտամբեաց զթագաւորս վասն նոցա՝
 շմերձենալ յօժեալս»: Արդ այս յաւելուածը
 բայցայայտ կը ցուցնէ թէ ինչ դէպք կ'ակնար-
 կեն վերագոյն ըսուածները. Գրիգոր՝ յի-
 շատակութիւն մը կ'ընէ յըննդոց զրոց զԼ-
 ի. պատմութեան, ուր Աստուած կ'երևի
 առ Արիմանից Սառայի համար. ուսկից ու-
 ընեն հայ թարգմանիչը ինագանդի բարը
 կը հնարէ հոս, եթէ ոչ՝ անուշագրութեամբ
 սխալելով լատիներէն pareo բային իմաս-
 տը, որ հաւասարապէս թէ՛ ձնագանդի կը
 նշանակէ և թէ երևի, և փոխանակ՝ միև-
 յև ինկրանտաց բազաւորացն տրելի տեսիւմըն
 ըսելու, ձնագանդի կ'ըսէ: Այս սխալը ա-
 լելի բացայայտ կը ստուգուի նաև յետոյ
 յէջ 660 ուր ճիշտ հակառակ սխալին մէջ
 կ'ընայ երևալ զնելով փոխանակ ձնա-
 զանդիս զնելու. զայս պիտի տեսնենք իր
 կարգին:

Սակայն զեռ ասոնցմէ աւելի մեծ շփո-
 թութիւններ ալ կը նշմարուին, և այնպի-
 սի շփոթութիւններ որ հայերէն թարգմա-
 նութեան մէջ հեղինակին ուզած իմաստը
 կը խաւարեցնեն և կը ջնջեն: Այսպէս է
 յէջ 208, 249—50, 259 և այլն, հան-
 դիպած աղիցոյրիւն բառը, զոր եր. թարգ-
 մանչը անխտիր գործածած է լատ. effi-
 cio-effectus-eflicacia-effatus-effigies

և այլն բառերու տեղ, այս բառերը ամ-
 բողջ նոյն արմատէ և նոյն նշանակութիւն
 ունեցող համարելով: Ուստի 259 էջի մէջ
 տուած է մեզ. Տեսանեն զի ազդեցուցիչ
 էին նմանօրիւնք ճշմարիտ կերպարանացն
 Քրիստոսի, սխալ թարգմանելով effigies
 = պատկեր բառը, փոխանակ ըսելու. տե-
 սանեն զի պատկերը էին նմանօրիւնքն ճշ-
 մարիտ կերպարանացն Քրիստոսի:

Սակայն հոս առանց այս սրբագրութեան
 ալ իմաստը շատ կորուստ մը չընենք, և
 նոյն բանը կարելի է հասկնալ՝ նաև աղ-
 դիցոյցիչ բառը իբրև նշանակչ, ցոյցիչ
 կամ յայտարարք մեկնելով: Իմաստը ըիչ
 մը աւելի մութ է 249—250 էջի մէջ, ուր
 —բանդի և ի սկզբան ըստ ազդեցութեանն
 երևալ Աստուած. զոր և տե՛ն, երկ ըստ
 պատկերի Աստուծոյ որար զմարդև,—պար-
 բերութիւնը՝ կրնայ ենթադրել տալ հաւա-
 սարապէս՝ թէ՛ ըստ զօրութեանն, effica-
 cia, effectus բառերով, և թէ՛ ըստ նմա-
 նութեանն դարձեալ effigies բառով, տա-
 լով մեզի բանդի և ի սկզբան ըստ զօրութեանն
 երևալ Աստուած, և կամ—բանդի և ի սկզբան
 ըստ նմանութեանն երևալ Աստուած ձեւ-
 րը: Իսկ յէջ 208 բոլորովին խանգարուած
 և անիմանալի եղած է բուն իմաստը, զոր
 գրեթէ գուշակութեամբ կը համարինք վե-
 բանորգել: Հոս կ'ըսուի. — իսկ իսկական
 աստուածօրիւնն ի ծածկութեանն ի վերոյ
 քան գտարրական նմանօրիւն եւ զմայնիլ
 զազդեցութիւնս, յորում յանմականս յե-
 թեանն զիւրն ունի: Ինչ կը նշանակեն այս
 գծայնի զազդեցութիւնս, յորում յանմական
 յիւրեանն զիւրն ունի անիմանալի բառե-
 ըր, ջանանք լատիներէն բնագրի վերածե-
 լով իմաստ մը գտնել որ պատշաճի բո-
 վանդակ այդ էջի պարբերութեան. համա-
 ընելով որ ինչպէս վերագոյն յիշուած օրի-
 նակաց մէջ, հոս ալ նոյնպէս աղիցոյրիւն
 բառի վրայ գտանոյ ինդիքը, կը կազմենք
 լատիներէն բնագիր մը effatus (effor)
 բառով և կ'ունենանք բառ առ բառ հա-
 մապատասխան հայերէնին, et (plus quam
 super) quam vocem effatam, quod
 proprium esse sibi (suum esse?) ha-

bet, որ կու տայ իսկոյն պայծառ իմաստ մը, ամբողջացնելով նախորդը, այսպէս. իսկ իսկական աստուածութիւնն ի ծածկութեանն ի վերայ քան գտարբական նմանութիւնն և (քան) զբարբառ ձայնի, զի (կամ որով) իւր սեփական զգոնն ունի,—ակնարկութիւն (allusion) մ'ընելով Աստուծոյ յատուկ անուան՝ Որ Լն: Այսպէս կ'ուզողուի և իմանալի կ'ըլլայ նոյն պարբերութեան վերջին բացատրութիւնն ալ. այլ որպիսի զի կարասցեն զեռ տեսանել, վասն այնորիկ ասեայ (== առնու) նմանութիւն և յիևիս, բարբառեալ եւ զագգեցուծիւնս, ուր վերջին բառերս բարբառեայ և զագգեցուցութիւն կ'ըլլան կամ և զբարբառ նայնի, և կամ և զնմանութիւն նայնի որոնք երկուքն ալ հաւասարապէս կու տան ուղիղ իմաստ և կը համաձայնին ամբողջ այս 208 էջի պարբերութեան:

Այս ոճով իմաստի անստուգութիւն և երկղիմութիւն մ'ունինք նաև յէջ 213 ուր աստուանայի համար կ'ըստի. «արդ ո՞նի ի վերին զօրացն էշխանութեանցն Հրեշտակացն... իւրովը կամօք չարացեալ չարն՝ չար անուանեցաւ. ուստի և յետ երբայոյ՝ զհակառակասէր զաստանայ անուն ժառանգեաց». արդ չհնք կընար որոշ ստուգել թէ այս յետս երբայոյ—ի փոխարէն ինչ ունեցած է լատին բնագիրը, արդեօք retracto, retraho թէ retroago? որոնցմով կարելի ըլլար բուն յետս երբայոյ—ին իմաստը ճշդել. պիտի ըլլայ արդեօք ուստի և մերթնալ, կամ յնացեալ, կամ իշտասարեալ, թէ՛ ուստի և աստուանայ, (ինչպէս Երանոս և այլ Ս. Հարց ունին) զանպատկասէր զաստանայ անուն ժառանգեաց, Այսպէս անստոյգ է նաև 227 էջի առ ի հարկանելոյ ազգին բշտասացելոյ խօսքը, ուր culpa = յանցանք և հարուած նշանակութեամբ բառէ ծագած շփոթութիւն մը կընայ ենթադրուիլ, և հասկցուիլ՝ վասն մեկուց ազգին բշտասացելոյ: Սակայն նոյնպէս անստոյգ է 234 էջի սխալ եղանագրեայ վայելեցուցանէ—ն որ պիտի ուզողուի կամ եղանագրեայ արևմուտէ, և կամ եղանագրեայ հրամայէ, որովհետև թարգման-

նիչը յայտնապէս շփոթած է հոս իրարու հետ delecto և delecto բայերը. իսկ յէջ 240 չէ հասկցած annuo = հայտարարել, հնազանդիլ բայը և annuantes բառ մը գտնելով լատին բնագրին մէջ կարծեր է որ այդ ծագած ըլլայ annuus = տարևոր, միամեայ բառէ, ուստի թարգմաններ է ամառէս արարեալ, զնելով այսպէս. «անդ « յարուցեալ նոցա դատաւորս, որք ըստ « Աստուծոյ կամացն դատէին զնոսա... և « էր զի ամառէս արարեալ նոցա (զոր « պէտք է ուղղել՝ հարատակեալ կամ ան « սացեալ նոցա), իբրև մեռանէին դատա « ւորքն՝ դարձեալ ամբարշտեալ յԱստու « ծոյ՝ զից պաշտօն տանէին »: Յաջորդ (241) էջի մէջ ալ թերևս ուղղագոյն էր փոխանակ քարձրագոյն զնելու, ըսել զվերին համապատասխան լատ. superiora բառի, ինչպէս կը գուշակենք այս խօսքի մէջ. «էր տեսանել... գուրդս գուրդս մարգարեական... որք և բարձրագոյն (ուղղելի՛) վերինս) պատմեիև իտարպետան տոնմիև իսա իւրաքանչիւր կարգի»: Երջնպէս 285 էջի, «հաւատացիք յերթորդութիւնն, ճշմարտեցէք ի միութիւնն անշունչ յուրեամբ, յուս հաւատովք», խօսքի մէջ ձմարտեցիք բառը՝ որ իւր յատուկ իմաստով հաւատուել, ստուգել կը նշանակէ և հոս անյարմար կը թուի, մտածել կու տայ մեզ լատ. կամ verare բայը, որ պիտի տար հայերէն խստովան լիւրք ի միութիւնն, և կամ vereor բայը, որ պիտի տար պատուելէք զմիութիւնն, երկու դիրքին մէջ ալ միշտ verus = ձմարտի արմատի շփոթութիւն մը շատ հաւանական կ'երևի թարգմանչի կողմանէ:

Թողլով զեռ այսպիսի շատ անճշտութիւններ, որոնց մի առ մի կրնան անդրադառնալ ուշադիր ընթերցողք, առնունք մի քանի օրինակներ ալ յետին էջերէն, ցուցնելու համար որ ամբողջ գիրքը միևնոյն զբնի արդիւնք է և միակ բնագրի թարգմանութիւն: Յէջ 571 կը կարդանք. «Եւ « կին թագաւորին և օրիորդք թագաւոր « բագունք... բերէին ծիրանիս և զտփե « հուսն զիպակն զեքիկագոյն սպիտակի իր-

« րև գծիւն, ի հանդերձանս սրբոցն, Նոյն-
 « պէս և զուսկին և զարծածին և զկտաւան
 « փութով կուտէին առ դուրս հնձանին » :
 Աստ երկնագոյն բառը դրուած կը համա-
 բինը լատին. caesitius, —um բառի տեղ
 որ կը նշանակէ երկնագոյն, կապոյտ և միան-
 զամայն նուրբ կտաւ, *linge effile, lin-
 ge blanc de lessive* ինչպէս կը գնեն
 բառագիրքը . և այս յետին նշանակու-
 թեամբ դրուելով պիտի ունենայինք՝ զու-
 կհնաւն զիպակն և զկուսան սպիտակ իր-
 րև գծիւն և այլն¹, որ շատ աւելի ճիշտ
 կը թուի: Ուրիշ սխալ մըն ալ, ո՛չ թարգ-
 մանութեան՝ այլ լոկ ձեռագրի ընթերցման,
 կը հանդիպինք յէջ 603 և կը նշանակենք
 հոս բնագրաց ուղղագրութեան համար կա-
 բերող քառորդն. կը կարդանք. Եւ ի:խաւ
 նոց զարդրին ցուցել թարգմ. մեծարուն
 եկիղկեցեացն... ուր եկեղիցեացն բառը ուղ-
 դելու ենք, եկեղոցն: Իսկ յէջ 636 գտնուած
 գուշակէր բառը, փոխանակ դնելու՝ շարդոգր,
 նշան մ'է՛ որ թարգմանիչը շփոթած է ի-
 բարու հետ praedico և praedico բայերը.
 այսպէս է իմաստը. ամենայն ումիք մա-
 տուցելոց առ եւ գոյն պատուիրեալ զու-
 շակէր (= քարդոգր): — Թողլով ուրիշներ՝
 յետին օրինակ մըն ալ անունքը 660 էջէն,
 ուր՝ ինչպէս վերագոյն յիշեցինք ինպակե-
 դեպ՝ բառի տեղ դրուած կը գտնենք և
 րևեալ, pareo բայի յատուկ իմաստը շփո-
 թելով. հոս կը կարդանք. « Արդ այսու
 « օրինակու գամենայն աւուրս կենաց ա-
 « ռաքելարան »՝ առաքելագործ վարեալ

« զհետ երևեալ հրամանացն ընկալելոց,
 « մինչև ի վախճան կատարածին զայս
 « առնէր ամ յամէ »: Արդ յայտնի սխալ
 մ'է՛ հոս այս երևեալ-ը վոր Տ. Նորայր
 կ'ուզէր գնտ երրեալ. զիտելու ենք սա-
 կայն որ հոս չի յարմարի բնաւ զկնտ եր-
 բեալ, որովհետև արդէն իսկ զկնտ կապուած
 է նախորդ վարեալ բառի հետ, ուստի ուղ-
 դագոյն համարելով մեր զիտողութիւնը՝
 այսպէս կը կարդանք այդ նախադասու-
 թիւնը. « Արդ այսու օրինակու գամենայն
 « աւուրս կենաց առաքել... առաքելագործ
 « վարեալ գնտ՝՝ ւնտողեկեալ հրամանացն
 « ընկալելոց » և այլն:

Այսու կը փակենք Աղաթանգեղոսը,
 անցնելու համար իւր ժամանակակից և
 բաղդակից փաւտոսի Բիւզանդացոյ, ու-
 ղուն պատմութեան մէջ՝ եւս յայտնի կը
 փայլին լատիններէն սկզբնագիր բնագրի մը
 հետըզեր. միայն կ'արժէ դիտել որ հոս ևս
 զըջագրական աղաւաղումներ շատ խան-
 գարած են յաճախ սկզբնական թարգմա-
 նութիւնը, և մենք այս լեզուական քննու-
 թեանց համար ստիպուած ենք շատ օրի-
 նակներ ի բաց թողուլ՝ իբրև երկբայա-
 կանք, թէպէտ և հաւանական երևին մե-
 զի՝ Ուրիշ կէտ մըն ալ որուն լաւ է այժ-
 մէն ուշադիր ըլլալ, այս է որ, մինչև
 ցայսօր այս գրոց յունարէն լեզուաւ գը-
 ղուած ըլլալուն ի նպաստ յառաջ բերուած
 փաստերը, չեն հիմնուած լեզուագիտական
 համեմատական քննութեանց վրայ, ինչպէս
 կ'ընենք մենք, այլ լոկ հիմնուած են յու-

1. Երկնագոյն բառը, ինչպէս վերագոյն յիշուած պա-
 ինպակեցեացն, կը հանդիպինք նաև Ս. Գրոց մէջ,
 բայց այնպիսի դիրքերով որ շատ երկբայական կը մնայ
 իրենց ծագումը և բուն նշանակութիւնը, և զանազան
 մեկնութեանց կրնան տեղիք տալ. մինչև հոս Աղաթան-
 գեղոյ մէջ՝ որտեղ կ'երևին թէ՛ անոնց ծագումն և թէ՛ յա-
 տուկ նշանակութիւնը:
 2. Առաքելարան բառը երբ զրգացայ սխալ կրնայ
 ուղղորդել՝ առաքելարար, սակն, արար, արան և այլն:
 Տ. Նորայր հոս կը յաւելու Գրիգորիոս անունը. յաւե-
 լուած որ մեզի հաւանական և ընդունելի չեթուի. (Ար-
 վ. և Թորիք բրգմն. էջ 60): Անոր էջ 53 կայ յալորդ
 ուղղագրութիւնն գնտ երրեալ:
 3. Ասոց կարգէն կրնանք գտնել յէջ 67 Մամիկո-
 նեանց համար բուած իրաքիտան ազնակողիք աղանտ.
 Գրոջց այժմունքիք վարձակահանքը անականելը, որուն
 ազնակողիք աղանտորդ-ը կ'էջ լեզուագիտ. ուղղագրե-

լեք երբ սխալ ընթերցումը՝ ազնակողիք աղանտորդ,
 ինչպէս կ'ուզէր մեծ. Ն. Գ. Վ. Գաւ. (Ուղղագր. էջ
 71-72), և կամ ինչպէս կ'ակնարկէ Նախագան բառա-
 րան՝ պատմագիր. կրնայ մեկնուել նաև երբ սխալ թարգմա-
 լան. reduces alienigenae *aliorisigenae*՝ եկր օտարագ-
 րիք այլաբարդի. Նախագանն՝ և անոր հետեւելով նաև
 Ատոնց (Armenia в Эпоху Юстиниана ևս
 466) կը մեկնուի նաև երբ ի հնամանեակն աղանտ, առ
 կայն Մամիկոնեանց համար թէ՛ ընդունելի որ աղա-
 նաբարդ չեն (ուստի և վարձակահանք — վարձական —
 անիշը ըստ Ատոնցի՝) ընդ կրնար ընդունել որ նաև աղա-
 նագրիք ըլլան: Այս վարձակահանքն — Ն. Գ. Վ. Գաւ.
 կ'ուզէ ուզուել երբ վարձակահանք, իսկ ըստ մեր տեսու-
 թեան այդ արեւմտեանք վարձակահանք-ը կրնան յարա-
 բերութիւն մ'ունենալ լատ. aligero, aquiligero բա-
 սերու հետ երբ քրոսոսիք կամ արեւմտեակիք:

նական և յունարար զործածուած բանի մը բառերու վրայ. սակայն բանասիրու թեան շատ խախուտ հիմ մը կ'ընծային ա նոնք և վճռական կը համարինք այս կէ տիս մէջ կիծերի՝ հետեւեալ վկայութիւնը. «Այն յունարէն բառերն, որոնք հեղինաւ « կին գրութեան մէջ կը գտնուին, ... ոչինչ « կ'ապացուցանեն որովհետեւ կրնան դիւ « բաւ մեկնուիլ այն սերտ յարաբերութիւն « ներով, որը կային հոովմէական կայ « սերութեան և հայաստանի մէջ՝ չորրորդ « դարու առաջին կիսուն»:

Եւ ճիշտ այս սերտ յարաբերութիւններն են որ առաջնորդ կ'ըլլան մեզ այժմ լա տիներէն հին բնագիրը նշմարելու, առ որ կ'օգնեն նաև իւր կրկնակ անունները՝ Բիւ զունդ կամ Բիզանդոսի, և մանաւանդ փաւ ստոս՝ որ զուտ լատինական է: Սակայն մեր կարծեաց հիմը լեզուական ցննութիւնները կը կազմեն սխալ թարգմանութեանց միջո ցաւ՝ որոնք հայերէնի մէջէն սկին յայտնի կը փայլեցնեն լատիներէն բնագիրը:

Այսպիսի սխալներէն առաջինը կը փայ լի՝ յէջ 50 և զայն կը պարտինք օրինաւ կողին, որովհետեւ թարգմանիչը անզրաւ զառնալով՝ ուղղած է իւր սխալը, ճիշտ այնպէս՝ ինչպէս Ազաթանգեղոսի յառա ջարանին մէջ տեսանք երկպտոսական = յանորիւն օրինակի մէջ: Հոս ալ ունինք համապատասխան չիւ է = ինսուր զուգը զութիւն մը լատին. modum բառի սկզբնա րար nondum կարդացուելով: Ահաւասիկ այդ խօսքը. « Այնչափ զայրացոյց զըր արային՝ Հայոց, որ ապա աւ հրամանն ի նմանէ, զի չիւ է ձևար գտանել մարթել ճանապարհս, մեքենայիւր զայթակողութիւնս զնել՝ որաւ ըմբռնել զարքայն Հայոց »: Արդ ջնջելով այս սխալ ընթերցմամբ յա տաջ եկած և նոյն իսկ թարգմանչէն սըր-

բագրուած աւելորդ յի. է-ն կ'ունենանք պայծառ իմաստը. «այնչափ զայրացոյց զրգոնաց... որ ապա առ հրամանն ի նմա նէ, զի ինսուր զոցէ՝ մարքասցի ճանապարհս, մեքենայիւր զայթակողութիւնս զնել՝ որաւ ըմբռնել զարքայն Հայոց»:

Ասոր նման սխալ մըն ալ զոր դարձեալ ինքը թարգմանիչը փութացեր ու սրբագրեր է, ունինք յէջ 97 քակի բառով՝ որուն կից ունին երեք ձեռագիրներ նաև զի. իմաստը կը պահանջէ որ այդ քակի-ն սրբագրուի զի, և շատ զիւրին էր թարգմանչին շփո թել զquot = քակի և զquod = զի բառերն իրարու հետ . Եւսերիտս կը խնդրէ, ըստ սաղրեւոյ՝ Ս. Բարսղի, որ իւր հետ ըն կեր մըն ալ կարենայ բերել վիճարանութեան համար, թագաւորը այն առեն կը հարցնէ արիանոս եպիսկոպոսաց, « և յանիկ կայան նոքա Եւսերի քանի (յերիս օրինակս զի քակի) սոցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ զայցի յառնանք ». այս պիտի ըլլայ-և յան ձիկ կայան նոքա զի Եւսերի սոցէ ընկերս ընդ ինքեան:

Նոյնպիսի սխալ մ'է նաև նախորդ էջի (96) զնա բառը, ծագած՝ լատիներէն cum (quum) = յորժամ բառը կարդալով eum = զնա: Արիանոս եպիսկոպոսունք կը դի մեն առ վաղէս խնդրելով որ կրօնական հակաճառութիւն մ'ըլլուի, փոխանակ մէ կէն կայսերական հրովարտակով ուղղա փառները հալածելու, և որ կողմն յարդես ցէ, յայտ յիցի . զի մի՛ զնա քանադատ, զրոպտա ինէ երևեսցի յարարիւնն: Այս պարբերութիւնը ցննութեան առնելով մեծ. Հ. Գ. Վ. Նահապետեան ³, կ'ըսէ. « զնա. « Ուղղ, թերևս նմա — Աւելորդ կը թուի « զնա և ուղիղ զայ իմաստն զի մի՛ զըւ նապատ, և այլն: Սակայն ինձ կը թուի որ բան մը կը պակսի բոլոր իմաստը լրացնելու համար »: Արդ հոս բան մը

1. Փառտոս Բիզանց կամ ճայիսիկ եկեղեցոյ սկըբ բնաւորութիւնք. Թրգմն, Հ. Գ. Վ. Թորոսեան, էջ 24.
2. Յաջորդ 98 էջի մէջ ենք կրօնական վիճարանութեան նկարագիր կ'ըլլայ, Ս. Բարսղի ճամբ կ'ըսուի որ, Հնչուով սրբով յցեալ յեկեր, կայր զիմիտցոյն եպիս կոպոսին Եւսերի, եւ ՍԱՐԻԲԻ Վիտյոբիւն ի ցրոց: ՍԱ ՌԻԲԻ բառը որովհետև ձեռագրաց սխալ ընթերցմամբ եղած

է սա ցրէր, մեծ. Հ. Գ. Վ. Նահապետեան (Ուղղ. Մատեն. էջ 86) կ'ուղղէ ՍԱ ՌԻԲԻ բայց աւելի ճիշտ կը համարինք մեր ուղղագրութիւնը զիտեղով որ Բարսղի կեցած Իւսերի եանք (զիմիտցոյն) Ս. Գրոց խօսքերը եւ թիւկաղեր:

3. Ուղղ. ազգ. Մատենագրաց էջ 84:

չպակօտիր և ոչ ալ զնս՝ աւելորդ է, այլ միայն պէտք է զայն յարմար ընել թարգմանութեան սխալն ուղղելով. զի մի յորժամ բանադատ, զրարտտ ինչ հրեկեցի յաղրութիւնն: Այս ակն յայտնի սխալը կը քաջալերէ զմեզ նոյն էջի ուրիշ իմաստ մըն ալ ուղղելու՝ հիմնուելով ձեռագրաց համաձայն ընթերցման վըայ. հրատարակիչը բնագրի այլ վստե զի առ Աստուած հաւատասցնին յսերն և քննութիւնքն խօսքը կ'ուղղեն — այլ վստե զի առ Աստուած հաւատոց են յսերն և քննութիւնքն: Թերևս լաւագոյն ըլլար ուղղել նաև այլ զի վստե առ Աստուած յաւատոց են և այլն: Բայց մեզի կ'երևի որ այս իմաստին մէջ ոչ թէ հաւատասցին (= հաւատասցին) բառն է ուղղուելու կարօտ, այլ՝ առ Աստուած բառերը, համարելով թարգմանչի յատուկ սխալ ընթերցում մը ad eum = առ ինքն — ի փոխարէն ad Deum = առ Աստուած կարգալով. որով ձեռագրաց միաձայն ընթերցումն ալ կը մնայ ճիշտ, տալով սա խօսքը. այլ վստե զի առ ինքն հաւատասցին յսերն և քննութիւնքն, վարդապետի փոքրացի գալ: — Այս ոճով կրնայ մեկնուել մեր մը տրուիլ 20 էջի նայի բային համարելով բնագրին մէջ լատ. cernere = նայի բայ մը՝ որ փոխարեքալ իմաստով կտոյի կը նշանակէ. որով կ'ըլլայ. և ոչ տային անխտիր արչաւնչ աւերիչ զերկիրն Հայոց, և ոչ նայիլ (ուղղ. = և ոչ մարտնել):

Թողլով դեռ ուրիշ մանր անուշադրուելիւններ յորս այնք, նմա կը դրուին՝ փոխանակ այնորիկ, նորս = ipsi ըլլալու, ինչպէս յէջս 108 և 201. կամ ինչպէս յէջս 116 և 186 ուր զիտրդ և զի զիրար կը փոխանակեն լաւ մտադիր ջըլլալով ut = զի, որպէս և uti = իրքն. բառերու. և կամ ինչպէս յէջ 126 ուր ի գանձ տան (= ի գանձատունն?) իրավայքը բառը ուղղելի կը համարինք յանձներ, աչանդէր կամ սաարքը լատ. mando բայով, առունք աւելի կարևոր կէտ մը յէջ 118 ուր կը կարգանք. « յայնժամ թագաւորն զիւր սառ « մոյրսն զգլխովն ածեալ, ի փոյր կնչանն « մտեալ, զիւր զէմս երեսացն ծածկէր,

« քնոյ պատճառ եղեալ »: Այս տարօրինակ կնչանն՝ հայկազեան բառգիրքը կինն բառէ հանելով խորդալ կը հասկնայ¹, իսկ մեծ. Հ. Գ. Վ. Նահապետեան² կը սքըրագրէ զայն նկնման կամ նկնարանն: Բայց մեզի ուղղագոյն կը թուի այդ կնչանն բառը փաւստոսի սովորական կրկնութիւն մը համարիլ նախորդ ի փոյր բառի և ուղղել ի շունն. սակայն ասկէ աւելի կարևոր է ուղղել այդ ի փոյր բառը և դնել ի զսնտորակ կամ ի զսնտոյ նշմարելով սխալ ընթերցում մը sedule = ի փոյր, շունն փոխանակ կարգալու sedile = զսնտորակ, զսնտոյ: Ուստի այս սքրագրութեամբ բովանդակ խօսքը պիտի ըլլայ. « յայնժամ « թագաւորն զիւր սամոյրսն զգլխովն առ « ծեալ, ի գամաւորակն կամ ի պաղպառ « ջունս (խոր sum?) մտեալ, զիւր զէմս « երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ »:

Բաւական համարելով այս օրինակները փաւստոսի պատմութեան լատիներէն բնագիրը նշմարելու համար, անցնինք այժմ մեր մատենագրութեան աւելի կենսական և կարևորագոյն կէտ մը շօշափելու, այս է՝ տեսնելու թէ ինչ հետեանք կրնան ելլել այս մեր տեսութիւնքը հիմն առնելով: Եւ նախ կը տեսնենք որ լայն գիծերով կը շեշտուի ազգային և հայագէտ բանասիրութեան մինչև ցայժմ անտեսած կարևոր մէկ տարրը, լատին լեզուն, որ մեր ոսկեդարեան մատենագրութեան առաջին և հիմնական տարրը կը դառնայ: Նախորդ յօդուածի առաջին տողերու մէջ համառօտ ակնարկով կը թուէինք հայ-հռովմէական սերտ յարաբերութիւնները որոնք անշուշտ իրենց անդրադարձ ցուցաբերում ունեցած պիտի ըլլային բուն հայ հայրենեաց պաշտօնական կամ զիտնական անձանց վըայ: Այս յարաբերութեանց շըջանակը հին Հռովմայ հետ շատ զգալի կերպով զօրացաւ մեր այդ յօդուածէն վերջ Հռովմայ մէջ

1. Եթէ ստուգի թարգմանիչն հոս կինն բառը դնել ուզան է, պիտի սովորուինք ըսել որ յայտնապէս սխալած է և Թերևս sum=խոր և sumo (sus)=խորհրտ բառերով.
 2. Ուղղ. ազգ. մատեն. էջ 98-94.

Միհրական տաճարի մը գտնուելովը, գիտելինք թէ Միհր աստուծոյն պաշտօնը եւս ապետ-հիւպատոսութենէ առ կայսրութիւն աւանդուած ժառանգութիւն մ'էր Պարթև-հայերէ հոս փոխանցուած, սակայն չէինք գուշակեր որ այդ միհրեան պարթև-հայ գաղթականութիւնը այնքան զօրաւոր ըլլար արդէն որ այսպիսի մեծ տաճար մը ունենար իրեն սեփական այնքան պատուաւոր կեդրոնի մը մէջ: Հռովմայ ժողովուրդը ինչպէս իւր պարտեակ կամ դաշնակիրը ազգաց ներկայացուցիչները կ'ուզէր իւր առջև տեսնել, այսպէս ալ կ'ուզէր որ անոնց աստուածները ասանջականութիւն գտնէին իր որմերէն ներս. եւ դաւ ժամանակ որ մինչև իսկ անոնց լեզուն ալ ժառանգեց, ինչպէս կը վկայէ կիլիկերոն յունարէնի համար, սակայն տեեց այդ քիչ ժամանակ. և արդէն կիլիկերոնէ մէկ ու կէս դար վերջ՝ Պլուտարքոս իւր Պրատուակոս խնդրոց մէջ կը վկայէ որ լատիններէնը գրեթէ ամէն ազգաց ընտանի լեզուն էր. Bientôt, dans la plus grande partie du reste de l'Europe, de l'Afrique du nord et de l'Asie occidentale, le latin, cultivé à côté des idiomes indigènes, que n'avait développés aucune culture, devint, sinon comme langue parlée du moins comme langue écrite, commun aux hautes classes de tout l'Empire, կ'ըսէ հմուտ լեզուագէտ քանասէրն Léon Vaïsse,¹ և յետոյ կը յաւելու. Après le partage de l'Empire, les empereurs d'Orient, jaloux de conserver le titre d'empereurs romains, y maintinrent, quelque temps du moins, le latin comme langue du gouvernement et de l'administration, et en enjoignirent l'emploi

dans leurs édits et rescripts. Եւ թէ որքան նախանձայուութեամբ ու աստուութեամբ կը կատարուէին այս հրամանները, նշան է եգիպտոսի մէջ 462-ին պաշտօնանկ եղած սպայ (magistratus) մը որ յանդգնած էր հասարակաց գործերու մէջ լատիններէնի տեղ յունարէն գործածել:² Եւ այս էգիպտոսի մէջ! Իսկ ինչ պիտի ըլլար ի Պօլիս որ կայսրութեան մայրաքաղաքն էր, և որմէ քայլ մը հեռու, նիկիոսիդոնի մէջ, արդէն շորորդ դարուն սկիզբը հետարութեան զուսպիտութիւն կ'ընէր Լակտանտիոս, քրիստոնեայ կիլիկերոն անուան արժանանալով: Եթէ հռովմայեցի կայսր մը, Մարկոս Ալեքիդոս, երկրորդ դարուն յունարէն կը գրէր իւր մուտոյրիւրը, արևելցի և եգիպտացի բազմաթիւ հանճարներ և մատենագիրներ լատին լեզուն միայն կը ճանչնային իրենց արժանաւոր, ինչպէս Ապուլէոս, Տերտուլիանոս, Ս. Օգոստինոս, Գ. դարու մէջ և Գլաւտիանոս Աղեքսանդրացին Գ. դարու վերջեր և հիւզերորդին սկիզբը: Իսկ ալ եկեղեցի և Վոսփորի ափանց վրայ, Չորրորդ դարու մէջ էր որ Եւստրոպիոս Պարթևաց հետ կառուող զօրավարը Վաղէս կայսեր կը նուիրէր իր Breviarium historiae romanae տասը գիրքերը. առ նոյն կայսր Վաղէս կը նուիրէր նաև 369-ին Ռուփոս Փեստոս նման ուրիշ գործ մը Breviarium rerum gestarum populi romani³: Եւ նոյն դարուն վերջը Ռսիկերբանի հայրենակիր յոյն Ամիանոս Մարկիզինոս կը շարունակէր Տակիրտոսի պատմութիւնը իւր *Resum gestarum* 31 գիրքերով: Լուեով դեռ բազմաթիւ գրութիւններ և հեղինակներ, յիշենք այս չորրորդ դարու վերջէն առ մեզ հասած *Notitia dignitatum et administrationum* որ տեսակ մը կայսերական զանաւանակ կամ

1. Encyclopédie moderne հաս. 19 է քառն Latin էջ 159-160.
 2. G. Paris. *Romania edesse*. (Ch-V. Langlois. *Lectures historiques-histoire du moyen âge* էջ 12. որ կը կարդանք նաև. Quand la capitale de l'empire eut été transportée à Byzance, il u'en

resta pas moins l'empire romain: Constantinople fut appelée nouvelle Rome ou simplement Rome, et la langue latine resta longtemps encore la langue officielle.
 3. Միթէ մը Փեստոս ինչպանն ալ այս Breviarium-ներու նման գործի մը մնացող չէ'...

պաշտօնական ցուցակ մ'է արեւելեան և արևմտեան կայսրութեան արքունեաց և վարչական պաշտօններու: Իսկ յաջորդ հինգերորդ դարու մէջ բաց ի Մագրոպոլուսէ և թէևոոս Բ. ի օրինագրքէն, Պոլսոյ մէջ դասախօսող հոովմայեցի հետորնեւրէն յիշենք յանուանէ հոչակաւոր Գլեւտոնիսը, և լռելով ուրիշ շատեր, ըսինք միայն որ գրեթէ յետին և ընտրելագոյն լատիներէն քերականութիւն գրողները եզան երկու արեւելցիք, Բրիսկոս կեսարացին, հետորութեան ուսուցիչ Պոլսոյ մէջ Անաստաս կայսեր ժամանակ Institutionum grammaticarum 18 գիրքերով և իւր աշակերտն Եւտրէս' Ars de verbo երկու գիրքերով: Գեռ վեցերորդ դարու մէջ ալ Պոլսոյ մէջ Յուստինիանոս իւր հոչակաւոր օրինագիրքով հովմէական պերճութեան գրեթէ յետին կոթողը կը կանգնէր լատին լեզուով:

Հոս Պոլսոյ մէջ, ի նորն Հոովմ, զոր հրացած կը գովարանէ Փարպեցին, մեր երանաշնորհ թարգմանչաց առաջին դասը իւր աստուածաբանական և իմաստասիրական հելլենական հմտութեանց հետ կը հմտանար նաև լատիներէն լեզուի, ինչպէս յիշեցինք նախորդ յօդուածի մէջ, և ինչպէս յետոյ իրենց կրտսերագոյն եղբարքը, երկրորդ կամ փոքր թարգմանիչները, (որ թէպէտ Պոլսոյ մէջ կը յաղթանակէին, բայց յԱթէնա իրենց ուսումը կ'առնուին մինչև իսկ Աթենացի անուշը ժառանգելով) յունարէնի հմտութեամբ կը փայլէին և հայ լեզուն ձեւելով յունին վրայ կը կազմէին մեր մատենագրութեան մէջ ծանօթ նկրեանսիրաց դպրոցը, այսպէս ալ այս երկրագոյն թարգմանիչք իրենց պարագլուխ անմահ դաստիարակաւն, մեծ հայրապետ Ս. Սահակաւ, և անմահ ուսուցիչ վարդապետաւն, Ս. Մաշթօցիւ, կը կազմէին ցարդ անտեսուած լատինագլուսաց դպրոցը: Եւ հինգերորդ դարը, ոսկեգոր հայկական գրականութեան, զոյգ առատարուղիս աղբերաց նման, տեսեր է իւր մէջ հոսիլը այս երկու լատին և յոյն հսկայ հոսանաց, տալով իրարու աննդակից

եղբայրակից մատենագրաց, իրարու այնքան մերձ և իրարմէ այնքան հեռու լեզու և ոճ: Այս զանազանութիւնն է ահա, լատին և յոյն լեզուի ազդեցութեան, որ կրնայ բանաւոր լուծում մը և մեկնութիւն մը տալ առաջին և երկրորդ թարգմանչաց, և նոյն իսկ միևնոյն խումբի մատենագրաց լեզուին մէջ նշմարուած զգալի տարբերութեան. ինչպէս մեծ տարբերութիւն մըն ալ յառաջ կը բերէ ասորբերէն լեզուն՝ իր կարգին: Եւ այս զանազան հոսանաց մտաղիւր ըլլալով է միայն որ կը համարինք թէ պիտի կարենանք վերջապէս, յետ երկար և անձայր վիճարանութեանց՝ սակէ վերջ ճշտել ու սահմանել իւրաքանչիւր խումբի պատկանող գործերը, և որոշ գծել հայ ոսկեղէն լեզուի հիմնական տարբերը, քերականական ձեւերը, շարադասութեան դարձուածները, պարզ և միանգամայն վեւմ, իւր նախագաղափար լատիներէնի նման, զատելով զայն նախադրութեամբ ու շրջանաւոր պարբերութեամբ գունագեղուած յունարանութիւնէ, և ասորական խորթ ճաշակէ և իւրատախուզտ ոճերու և բառերու կուտակութիւնէ:

Հ. Յ. ԱՊԵՐ

1. Ս. Մերովզ որ միայն ՍԱՍՍԻ ՍԻ մերձադոյնայ էր ի յունարէն ներկայան (բառ Գ. Փարպեցոյ), ըստ հմուտ եր ընդհանրական լատին լեզուի, ինչպէս կը վկայէ Սաննից կարապետ վարդապետ (որ բոլի ժի՛ն ցարու, բառ Հ. Ախշարի). զգի նա միայն ըր ՀԲՈՒՏ ԱՍՏԵՆԱԿԱՆ մասնին և արիական ստոյնն և փեւնիկեցոց թուականին): (Հայագաւուում. էջ 145): Գ. Փարպեցոյ հակասակ՝ Մաշտոցի վարդա յօրինողը Ս. Մերովզոյց համար կը վկայէ, «ի մեկնութեան տիւն վարձուակ ներկեական դարադարձի»: Սակայն մեր վերագոյն ըսածները կը ցուցնեն թէ այս երկու հեղինակութեանց մէջն որք աւելի հուսաւորիմ համարելու ենք: Աթմեան Մաշտոցի վարքը ծաղկեփունջ մ'է յօրինուած Ս. Լուսաւորչայ, Ս. Սահակայ, և այլոց ճամբար կանխազոյն ըսուած իմաստներով և բառերով: Այսու է նաև որ Ս. Մերովզ կ'ըլլայ յուսաւորի վրայ և Աւանց փոխանակի րո՛ն Ալուսաւորչայ, ինչպէս յայտնի ցուցուց Ռ. Կ. Մառ հրատարակելով Աղաթանգեղայ պատմութեան հին արարքն Թաղմանութեան, իսկ մեր նախնեց մէջ, Սաննիցն չէ միակ ծիծեռնիկը՝ որ Ս. Մերովզով կամ զէ՛թ հին նախնեց) լատինագլուսութեան վկայէ: Հ. Արեւան կը գտայ Ս. կամենիցոցոյ ըր՝ այսպիսի յեղանակ մը գտնելով. «Այս աւելի հետաքրքրական է ասոր յիշեն Մեարովզ պատմիչ մի հնագոյն քան գերէն Ք. դարու, և Բուհի նոյն ինքն Մեծն Մերովզ, որ յիշեր էր իր գրոց մէջ զՆավմանցիս, Գրայիս, Գրարգին ոճն»: (Հայագաւուում. Ա. էջ 48):